



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

„ 26 „, փետրվարի 2014թ.

N 41-Ա

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով
կարգադրում եմ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- | | |
|-------------------------------|--|
| Թիզյան Հ. | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ |
| Պետրոսյան Ս. | - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ |
| Նյութական պատասխանատու անձինք | |
| Դալլաքյան Ջ. | - հանձնող |
| Մարտիրոսյան Լ. | - ընդունող |
| Բայլան Գ. | - դպրոցի հաշվապահ |

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Հ. Թիզյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլղաթյանին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Տ Ա Ր՝

Ա. Հ Ա Կ Ո Ւ Բ Յ Ա Ն